

Կոտայքի մարզի բնակչության թվաքանակը 2018թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 250700 մարդ, որը հանրապետության բնակչության 8.4%-ն է, որից՝ 136700-ը քաղաքաբնակներ են (54.5%), 114000-ը՝ գյուղաբնակներ (45.5%):

2017թ. մարզի արտադրական ձեռնարկությունների կողմից թողարկվել է 162.1 մլրդ. դրամի արտադրանք՝ նախորդ տարվա 136.3 մլրդ. դրամի դիմաց կամ ծավալներն ավելացել են 18.9%-ով: Արդյունաբերական արտադրանքի ծավալների ավելացումը հիմնականում պայմանավորված է նախորդ տարվա համեմատ էլեկտրաէներգիայի արտադրության և մշակող արդյունաբերության ցուցանիշների ավելացմամբ: Այսպես, 2017թ. էլեկտրաէներգիայի արտադրության ծավալը կազմել է 60.3 մլրդ. դրամ, ինչը նախորդ տարվա համեմատ ավել է 3.6 մլրդ. դրամով կամ 6.4%-ով: Հաշվետու ժամանակահատվածում մշակող արդյունաբերության արտադրանքի ծավալը կազմել է 97.8 մլրդ. դրամ, ինչը նախորդ տարվա համեմատ ավել է 22.2 մլրդ. դրամով կամ աճը կազմել է 29.4%: Ընդ որում աճ գրանցվել է հիմնականում սննդամթերքի (10.9%), խմիչքների (63.3%), դեղագործական արտադրանքի (54.6%), այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների (31.5%), հիմնային մետաղների (4.1%) արտադրության ճյուղերում: Հանքագործական արդյունաբերության ոլորտում հաշվետու ժամանակահատվածում գրանցվել է նվազում. արտադրության ծավալները նախորդ տարվա համեմատ նվազել են 149.0 մլն. դրամի չափով (նվազում 5.4%) կամ արտադրվել է 2.6 մլրդ. դրամի արտադրանք:

Արդյունաբերական արտադրանքի իրացման ծավալները հաշվետու ժամանակահատվածում ավելացել են 16.7%-ով կամ իրացվել է 159.5 մլրդ. դրամի արտադրանք՝ նախորդ տարվա 136.7 մլրդ. դրամի դիմաց:

2017թ. արտադրանքի իրացումը ներքին շուկայում կազմել է 115.7 մլրդ. դրամ, իսկ արտաքին շուկայում՝ 43.8 մլրդ. դրամ, այդ թվում՝ ԱՊՀ երկրներ արտահանվել է 23.7 մլրդ. դրամի և այլ երկրներ՝ 20.1 մլրդ. դրամի արտադրանք: Հաշվետու ժամանակահատվածում արտադրանքի արտահանման ծավալները նախորդ տարվա համեմատ աճել են 44.6 %-ով: 2017թ. մարզում միջին ամսական աշխատավարձը 2016 թվականի համեմատ աճել է 2.7%-ով՝ կազմելով 158794 դրամ:

Մանրածախ առևտրի շրջանառության ծավալը հաշվետու ժամանակահատվածում կազմել է 62.0 մլրդ. դրամ, որը նախորդ տարվա համեմատ պակաս է 4.9 մլրդ. դրամով կամ 7.3%-ով:

Իսկ բնակչությանը մատուցած ծառայությունների գումարը կազմել է 105.2 մլրդ. դրամ՝ նախորդ տարվա 101.8 մլրդ. դրամի դիմաց կամ աճը կազմել է 3.3%: